Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13>> ծածկագրով <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	02.10.2019թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Ռ. Ադամյան
	Աշ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 29.08.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Զանգված>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (03.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 17.09.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. ***Մասնագիտական փորձառության մասով***

Ներկայացված ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման համար 18.05.2016թ. կնքված N ՍԲԱՇՁԲ-10/5-1 պայմանագիրը (23 150 000 ՀՀ դրամ արժեքով) չի համապատասխանում հրավերով սահմանված նմանատիպ օբյեկտների պահանջին (նախատեսված ցանկից):

2. ***Աշխատանքային ռեսուրսների մասով***

Հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող

ա) <<էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերի>> ներդիր ունեցող ճարտարագետ-էներգետիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետի փոխարեն մասնակիցը ներկայացրել է <<էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերի>> ներդիրում ներգրավված, սակայն ճարտարագետ-շինարարի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ:

բ) <<էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգերի>> ներդիրում ներգրավված ճարտարագետ-էներգետիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող և <<բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի>> ներդիրում ներգրավված ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող առանձին մասնագետների փոխարեն Մասնակիցը ներկայացրել է վերը նշված ներդիրներն ունեցող բարձրագույն կրթությամբ և ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ մեկ մասնագետ:

գ) ճարտարագետ-շինարարի համար ներկայացված Հրաչյա Մուրադյանի որակավորումը հավաստող փաստաթուղթը (Ճարտարագետ-կոնստրուկտորի ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու բարձրագույն դասի <Ա> ենթադասի արտոնագիր կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիր՝ մասնագետի անվան առկայությամբ) բացակայում է,

դ) կապի ցանցերի և հաղորդակցման համակարգերի մասնագետի համար ներկայացված Գենադի Մեսրոպյանի մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթուղթը (դիպլոմը) բացակայում է:

Համաձայն կարգի 47-րդ կետի՝ 17.09.2019թ. ծանուցվել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Որպես անհամապատասխանությունների շտկում սահմանված ժամկետում (19.09.2019թ. դրությամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 23.09.2019թ. նիստին պարզվել է, որ ***Մասնագիտական փորձառության մասով*** մասնակցի ներկայացրած նախկինում կատարված (18.05.2016թ. կնքված N ՍԲԱՇՁԲ-10/5-1 և 13.12.2017թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-2017-ՆԱԽ14) պայմանագրերը չեն համապատասխանում Հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների ցանկին (<Բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության) օբյեկտի (-ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ կամ բարձրագույն ռիսկայնության (V կատեգորիայի) աստիճանի՝ հատկապես վտանգավոր ու տեխնիկապես բարդ, օբյեկտի (-ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ.

Մասնավորապես.

Կառուցման և/կամ վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը և փորձաքննության դրական եզրակացության ստացումը

ա. հանրակրթական դպրոցների (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցների, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների,

բ. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատների,

գ. պոլիկլինիկաներ, առողջության պահպանման կենտրոնների, ամբուլատորիաների, հիվանդանոցների, ծննդատներ, հոսպիսների,

դ. միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների,

ե. գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպությունների, բանկերի, գրասենյակների և այլ վարչական օբյեկտների՝.200 և ավելի աշխատատեղով

զ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 200 և ավելի տեղով,

է. մշակույթի կենտրոնների, թատրոնների, կրկեսների, կինոթատրոնների, համերգասրահների՝ դահլիճի 300 և ավելի նստատեղով,

ը. հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտների:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ գործունեությանը (այսուհետ՝ կոնսորցիում) և վերջինիս վերաբերյալ հարցում ներկայացնել Կոմիտե:

1.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 23.09.2019թ.

ա) հարցում է ուղարկվել Կոմիտե կոնսորցիումի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ կոնսորցիումը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է կոնսորցիումին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (26.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չի արձանագրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ գործունեությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Ռ. Ադամյան

---------- Աշ. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան